

2018

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ _____	1
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ _____	2
ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ _____	4
ՀԱՅՏԵՐ _____	4
ԱՐՏՈՆԱԳՐԵՐ _____	10
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ _____	12
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ _____	17
ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____	18
ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ _____	18
ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄՆԵՐ _____	19
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ _____	20
ԲՈՂՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ _____	20
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ _____	21
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ _____	23
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ _____	25

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա՝ Երեմ Չախոյան

Քրիստինե Համբարյան

Սուսաննա Դավթյան

Արփիինե Եզանյան

0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

Հեռ. 011 597 534 հայտերի ընդունման բաժին

Հեռ. 011 597535 տեղեկատվական-տեխնոլոգիական սպասհովան բաժին

Internet: www.aipa.am

E-mail: armpat@aipa.am

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության գործակալությունը 2018 թվականին իրականացրել է մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառույթները: Գործակալությունը 2018 թվականին առավել բարձրացրել է մատուցվող ծառայությունների որակը և անհրաժեշտ տեղեկատվությունը հասարակությանը ավելի հասանելի է դարձրել:

Ավելացել են էլեկտրոնային տարբերակով ներկայացվող արդյունաբերական սեփականության օբյեկտներին վերաբերող հայտերի քանակը, կատարվել են տվյալների թվայնացում, հրապարակվել են պաշտոնական տեղեկություններ, թարմացվել է Նիցայի դասակարգիչը: Իրականացվել է մտավոր սեփականության օբյեկտներին վերաբերող հայտերի և դրանց ամբողջ գործավարությանը վերաբերող փաստաթղթերի թվայնացում: 2018 թվականի ընթացքում մտավոր սեփականության գործակալության կողմից մշակվել են «Արդյունաբերական դիզայնի մասին», «Արտոնագրերի մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 3 նոր օրենքների նախագծեր, ինչպես նաև ՀՀ կառավարություն են ներկայացվել «Ապրանքային նշանների մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Մտավոր սեփականության գործակալությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում գործող առանձնացված ստորաբաժանում է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, մատուցում է ծառայություններ մտավոր սեփականության բնագավառում:

Գործակալությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի ընդունումն ու փորձաքննության անցկացումը, պետական գրանցումը, արտոնագրերի և վկայագրերի հանձնումն ու սահմանված կարգով նշված օբյեկտների պետական գրանցամատյանների վարումը, ինչպես նաև դրանց օգտագործման իրավունքի ընձեռման՝ լիցենզային պայմանագրերի, և բաց լիցենզիաների գրանցումը:

Իրավական պահպանություն ստացած արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների մասին պաշտոնական տեղեկությունները Գործակալությունը նախապատրաստում և հրապարակումը է իր կայքէջում:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան Գործակալությունը համագործակցում է նմանատիպ գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Գործակալության կազմում գործում են հետևյալ բաժինները.

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ


ԵՐԵՄ ՉԱԽՈՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ




ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ




Գյուտերի և օգտակար մոդելների
բաժին (9 փորձագետ)
Բաժնի պետ՝ Ավետիս Պերյան




Ապրանքային նշանների և
արդյունաբերական նմուշների բաժին (12
փորձագետ)
Բաժնի պետ՝ Լուսինե Մանուկյան




Հեղինակային իրավունքի և հարակից
իրավունքների բաժին (3 մասնագետ)
Բաժնի պետ՝ Արմենուհի Շահինյան





Տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին (5 մասնագետ)
Բաժնի պետ՝ Արփիինե Եզանյան



Հայտերի ընդունման բաժին
(3 մասնագետ)
Բաժնի պետ՝ Սուսաննա Դավթյան



Պետական գրանցամատյանների
բաժին (6 մասնագետ)
Բաժնի պետ՝ Արա Արզախյան




ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

ՀԱՅՏԵՐ

2018 թվականին Մտավոր սեփականության գործակալություն ներկայացվել է 105 գյուտի և 36 օգտակար մոդելի հայտ, որոնցից 135-ը՝ ազգային, իսկ 6-ը՝ օտարերկրյա հայտատուներից (3-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, 2-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից և 1-ը՝ Իտալիայից):

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2014-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայտատու	Հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
Ֆիզիկական անձ	91	64,54%
Իրավաբանական անձ, այդ թվում՝	50	35,46%
ԲՈՒՀ	34	24,11%
Առևտրային կազմակերպություն	11	7,80%
Գիտական հաստատություն	5	3,55%
Ընդամենը	141	100%

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 4619:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ՃՆՆ) ներկայացվող միջազգային հայտերով և Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով Գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

1994-2018 թվականների ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 93 միջազգային հայտ:


ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

2018 թվականին գործակալությունը ստացել է 1 եվրասիական հայտ, և սահմանված ժամկետում այն առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Այսպիսով, 1997-2018 թվականների ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 46 եվրասիական հայտ:


Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 135 հայտով, ընդ որում՝ 88 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 31 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 10 հայտով կայացվել են որոշումներ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին, 4 հայտով կայացվել են որոշումներ գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին, 2 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:

ՀԱՅՏԵՐԻ ԸՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԴԻԱԳՐԱՄԻ ՏԵՍԵՐՈՎ



ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՑ ՄՍԱՅՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԳՐԱՖԻԿԻ ՏԵՍՔՈՎ



2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՍԱՅՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	Ներկայացված հայտերի քանակը	%-ը ընդհանուր թվի մեջ
1.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	20	14,18%
2.	Բժշկություն և անասնաբուծություն (A61-A63, բացառությամբ A61K)	16	11,35%
3-4.	Չափում և օպտիկա (G01-G03)	11	7,80%
3-4.	Մննդամթերք և ծխախոտ (A21-A24)	11	7,80%
5.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	9	6,38%

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

6.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	8	5,67%
7-9.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	6	4,26%
7-9.	Օրգանական քիմիա (C07, A01N)	6	4,26%
7-9.	Տրանսպորտ (B60-B68)	6	4,26%
10-12.	Ներկեր, վառելիք, կենդանական և բուսական յուղեր (C09-C11)	5	3,55%
10-12.	Մետաղագործություն և էլեկտրոլիզ (C21-C23, C25)	5	3,55%
10-12.	Ֆիզիկական և քիմիական գործընթացներ (B01-B09)	5	3,55%
13-24.	Այլ բնագավառներ	33	23,40%
	Ընդամենը	141	100

ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԵՆ 2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	2016	2017	2018	Ընդհանուր թիվը (2016- 2018)	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	11	17	16	44	10.55%
2.	Չափում և օպտիկա (G01-G03)	16	11	11	38	9.11%
3.	Շինարարություն (E01-E06)	16	16	4	36	8.63%
4.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	7	8	20	35	8.39%
5.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	6	13	8	27	6.47%

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

6.	Մննդամթերք և ծխախոտ (A21-A24)	7	7	11	25	6.00%
7.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	10	5	9	24	5.76%
8.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	5	11	6	22	5.28%
9.	Գյուղատնտեսություն (A01, բացառությամբ A01N)	5	11	4	20	4.80%
10.	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32)	7	7	4	18	4.32%
11.	Տրանսպորտ (B60-B68)	4	7	6	17	4.08%
12.	Հագուստ և կենցաղային առարկաներ (A41-A47)	5	9	2	16	3.84%
13.	Ներկեր, վառելիք, կենդանական և բուսական յուղեր (C09-C11)	5	5	5	15	3.60%
14.	Մետաղագործություն և էլեկտրոլիզ (C21-C23, C25)	6	1	5	12	2.88%
15.	Օրգանական քիմիա (C07, A01N)	0	5	6	11	2.64%
16.	Լուսավորում, ջեռուցում, սառնարանային տեխնիկա (F21-F28)	3	4	2	9	2.16%
17.	Ֆիզիկական և քիմիական	2	1	5	8	1.92%


ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

	գործընթացներ (B01-B09)					
18.	Այլ բնագավառներ	11	12	17	40	9.59%
	Ընդամենը	126	150	141	417	100%

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2018 թվականին տրվել է գյուտի 100 արտոնագիր և օգտակար մոդելի 35 արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է գյուտի 2 արտոնագիր (Իտալիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ) և օգտակար մոդելի 1 արտոնագիր (Ռուսաստանի Դաշնություն):


ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2014-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

2018 թվականին տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 3252 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 209-ը, իսկ օգտակար մողելի 540 արտոնագրերից գործում են 128-ը:

ԳՐԱՖԻԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ



2018 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 4848 եվրասիական արտոնագրեր:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ


ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

2018 թվականին զգալիորեն աճել է Մտավոր սեփականության գործակալություն ներկայացված ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակը:

Ազգային ընթացակարգով ստացվել է 2147 հայտ, ինչը 13% -ով ավելի է նախորդ տարվա համեմատ (2017 թվականին՝ 1890 հայտ): Հայտերից 1556-ը ստացվել է ազգային հայտատուներից:

Ապրանքային նշանների թվով 2121 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, գրանցվել են 1453 ապրանքային նշաններ, որոնցից 1039-ը՝ ազգային հայտատուների անունով: Գրանցված ապրանքային նշանների քանակն աճել է ընդամենը 1%-ով նախորդ տարվա համեմատ (2017 թվականին՝ 1435 հայտ), 24%-ով աճել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումների քանակը (117 մերժում՝ նախորդ տարվա 94-ի դիմաց), հետ կանչված են համարվել 18 հայտ:

Միջազգային ընթացակարգով (Մադրիդյան համակարգ) Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 3043 ծանուցում, ինչը 1.5% ավելի է նախորդ տարվա համեմատ (2017 թվականին՝ 3002 ծանուցում):



ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

Միջազգային ծանուցումներով կայացվել է 2148 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ, նախնական մերժման մասին կայացվել է 806 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 764 որոշում:

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՄՏԱՅՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՄՏԱՅՎԱԾ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ

Երկիրը		Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
AM	Հայաստան	1556		1556
AE	Արաբական Միացյալ Ամիր.	17	4	21
AR	Արգենտինա	1		1
AT	Ավստրիա		30	30
AU	Ավստրալիա		4	4
AZ	Ադրբեջան		2	2
BA	Բոսնիա և Հերցեգովինա	1		1
BB	Բարբադոս	2	1	3
BE	Բելգիա	4	50	54
BG	Բուլղարիա		29	29
BM	Բերմուդա		2	2
BR	Բրազիլիա	1		1
BY	Բելառուս	1	28	29
CA	Կանադա	9	1	10
CH	Շվեյցարիա	42	223	265
CN	Չինաստան	2	500	502
CY	Կիպրոս	6	37	43

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

CZ	Չեխիայի Հանրապետություն	1	12	13
DE	Գերմանիա	17	291	308
DK	Դանիա	2	12	14
EE	Էստոնիա		7	7
EG	Եգիպտոս		2	2
ES	Իսպանիա	5	32	37
FI	Ֆինլանդիա		13	13
FR	Ֆրանսիա	23	126	149
GB	Միացյալ Թագավորություն	24	60	84
GE	Վրաստան	10	5	15
GR	Հունաստան	2	12	14
JE	Նորմանդյան կղզիներ (Ջերսի)	8		8
HU	Հունգարիա		129	129
HR	Խորվաթիա	6	2	8
ID	Հունգարիա	9		9
IE	Իռլանդիա	16	4	20
IL	Իսրայել	19	4	23
IN	Հնդկաստան	1	4	5
IQ	Իրաք	1		1
IR	Իրան	6	9	15
IT	Իտալիա	2	152	154
JO	Հորդանան	4		4
JP	Ճապոնիա	22	60	82
KR	Կորեայի Հանրապետություն	16		16
KY	Կայմանյան կղզիներ	9	1	10

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

KZ	Ղազախստան	4	21	25
LB	Լիբանան	1		1
LI	Լիխտենշտայն		12	12
LK	Շրի Լանկա		1	1
LV	Լատվիա		5	5
LT	Լիտվա		6	6
LU	Լյուքսեմբուրգ	1	34	35
MA	Մարոկկո		1	1
MC	Մոնակո		7	7
MD	Մոլդովայի Հանրապետություն		3	3
MK	Մակեդոնիայի Հանրապետություն		2	2
MU	Մավրիկիոս		1	1
MY	Մալազիա		1	1
NL	Նիդերլանդներ	6	28	34
JE	Ջերսի, Նորմանդյան կղզիներ	8		8
NO	Նորվեգիա		5	5
NZ	Նոր Զելանդիա		1	1
OM	Օման	5		5
PH	Ֆիլիպինների Հանրապետություն		1	1
PL	Լեհաստան		28	28
PT	Պորտուգալիա		12	12
QA	Կատար	4		4
RO	Ռումինիա		1	1
RU	Ռուսաստանի Դաշնություն	89	540	629
SA	Սաուդյան Արաբիա	1		1

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

SE	Շվեդիա	2	12	14
SG	Սինգապուր		16	16
SI	Սլովենիա		14	14
SK	Սլովակիա		4	4
TH	Թաիլանդ	2	1	3
TN	Թունիսի Հանրապետություն		1	1
TR	Թուրքիա	1	58	59
TW	Տայվան	1		1
UA	Ուկրաինա	6	60	66
UE	Արաբական Միացյալ Էմիրություններ	1		1
USA	ԱՄՆ	164	238	402
UZ	Ուզբեկստան		5	5
VC	Սենթ Վինսենթ և Գրենադիններ	1		1
VG	Վիրջինյան կղզիներ	4	7	11
VN	Վիետնամ	1	2	3
Ընդամենը		2147	2976	5123

2018 թվականին կրկին առաջատար դիրքում են 35-րդ դասի (գովազդ-գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ.) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները, որոնց թիվը կազմում է 382 հայտ (2017 թվականին՝ 312 հայտ), երկրորդ տեղում են 33-րդ դասի (ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ զարեջրի)) ապրանքների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները որոնց թիվը կազմում է 355 հայտ (2017 թվականին՝ 288 հայտ) և երրորդ տեղում են 5-րդ դասի (դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ.

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ


հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ սնունդ և նյութեր բուժական կամ անասնաբուժական նպատակների համար, դիետիկ հավելումներ մարդկանց և կենդանիների համար. մանկական սնունդ. սպեղանալաթեր, նյութեր վիրակապման համար. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ) ապրանքների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները, որոնց թիվը կազմում է 291 հայտ (2017 թվականին՝ 141 հայտ), վերջինս 7-րդ հորիզոնականից բարձրացել է 3-րդ հորիզոնական):

Նվազել է Հայաստանի Հանրապետությունից Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ) ներկայացված հայտերի քանակը: 2018 թվականին Գործակալությունից ՄՍՀԿ ուղարկվել է 35 միջազգային գրանցման հայտ, որոնց քանակը 16-ով քիչ է 2017 թվականին ուղարկված հայտերի քանակից (նվազում 31%):

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում զգալի աճել է նաև էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերի քանակը (191 հայտ), նախորդ տարվա համեմատ (87 հայտ):

Էլեկտրոնային հայտեր




ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2018 թվականի ընթացքում ներկայացվել է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ 93 գրավոր առարկություններ, ինչը 19 % -ով ավելին է նախորդ տարվա համեմատ (2017 թվականին՝ 78 առարկություն):

Առարկություններ և դիտողություններ



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2018 թվականին նվազել է Գործակալություն ներկայացված արդյունաբերական նմուշների հայտերի քանակը:

Ազգային ընթացակարգով ստացվել է 57 հայտ (2017 թվականին՝ 58 հայտ): Հայտերից 46-ը ստացվել են ազգային հայտատուներից, ինչը 8-ով պակաս է նախորդ տարվա համեմատ:

Գրանցվել է 53 արդյունաբերական նմուշ, որոնց տրվել են արդյունաբերական նմուշի գրանցման վկայագրեր:

Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին Հաագայի Համաձայնագրի Ժնևյան ակտի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշամաք ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 111 ծանուցում, ինչը 25% -ով պակաս է նախորդ տարվա համեմատ (2017 թվականին՝ 149 ծանուցում):

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է արդյունաբերական նմուշի 7 հայտ (2017 թվականին՝ 3 հայտ):

ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է 780 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում և արդյունաբերական նմուշի գրանցումից բխող 21 դիմում իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգման մասին:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են 112 ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու մասին, 20 ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու մասին, 1 ապրանքային նշանի ենթալիցենզիայի մասին, 6 ապրանքային նշանների լիցենզիաների փոփոխությունը գրանցելու մասին, 2 ապրանքային նշանների ենթալիցենզիաների փոփոխությունը գրանցելու մասին, 3 ապրանքային նշանների լիցենզիաները չեղյալ հայտարարելու մասին, ինչպես նաև 2 արտոնագրի բացառիկ լիցենզիա տալու մասին, 2 արտոնագրի զիջման մասին, 1 արտոնագրի լիցենզիայի չեղյալ հայտարարելու մասին դիմումներ:

Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 590 փոփոխություն և այլ գործողություններ:

2018 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1453 ապրանքային նշանների վկայագրեր, 94 գյուտի արտոնագրեր, 35 օգտակար մոդելների արտոնագրեր և 53 արդյունաբերական նմուշների վկայագրեր:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2018 թվականի ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ ներկայացվել է 12 ապրանքային նշանների, 1 գյուտի և 1 օգտակար մոդելի վերաբերյալ բողոքներ: Ներկայացված բողոքներից 7-ը բողոքարկման խորհուրդը բավարարել է, իսկ 7-ի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

2018 թվականին մտավոր սեփականության գործակալության կողմից մշակվել են «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Արտոնագրերի մասին», ինչպես նաև «Արդյունաբերական դիզայնի մասին» նոր օրենքների նախագծերը: Նախագծերը սահմանված կարգով տեղադրվել են իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am): Նշված նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին, ինչպես նաև անցկացվել են հանրային քննարկումներ համապատասխան շահառուների հետ՝ նրանց կողմից կարծիքներ ստանալու նպատակով: Նախագծերի լրամշակված տարբերակները սահմանված ժամկետներում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում, որոնք միասնական փաթեթով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Տեսալսողական կատարումների մասին Պեկինի պայմանագրին և «Կույրերի, տեսողական հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրին միանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

2017 թվականի նոյեմբերին Մոսկվա քաղաքում ստորագրված ԵՏՀ «Հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարման կարգի մասին» համաձայնագիրը 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում անցել է վավերացման համար անհրաժեշտ ներպետական

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

ընթացակարգերը և ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

2018 թվականի դեկտեմբերի 5-ին Մոսկվա քաղաքում ստորագրվել է ԵՏՀ «Ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին» պայմանագիրը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2018 թվականին հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 24 համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Տեղեկագրերում ընդգրկվել են 100 գյուտի, 35 օգտակար մոդելի արտոնագրերի, 53 արդյունաբերական նմուշների վկայագրերի, 1453 գրանցված ապրանքային նշանների մասին պաշտոնական տեղեկություններ, ընդգրկվել են նաև ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին տեղեկություններ:

2018 թվականին հրապարակվել է «Ապրանքային նշանների հայտեր» տեղեկագրի 24 համար: Իրականացվել է գյուտերի և օգտակար մոդելների գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական նմուշների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու համար, Գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինչպես նաև համընդհանուր օգտագործման նպատակով: Իրականացվել է 2017 թվականի «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և դրանց էլեկտրոնային ձևերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար:

2018 թվականին էլեկտրոնային եղանակով Գործակալություն է ներկայացվել 191 ապրանքային նշանի, 2 օգտակար մոդելի և 7 արդյունաբերական նմուշի հայտեր:

Ոչ թղթային տեխնոլոգիաներին անցնելու նպատակով ձեռնարկվել են մի շարք քայլեր: Թվայնացվել են 2015-2016 թվականներին գրանցված մոտ 2000

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ապրանքային նշանների փաստաթղթերը: Թվայնացման աշխատանքները շարունակվում են նաև 2019 թվականին: 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում թվայնացվել է 2015-2016 թվականներին գրանցված մոտ 1640 ապրանքային նշանների փաստաթղթերը:

2018 թվականի ընթացքում սկսվել են երկու նոր ենթահամակարգերի ներդրման աշխատանքները՝ այն է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցումների տվյալների բազայի և էլեկտրոնային եղանակով ապրանքային նշանների գրանցման ժամկետի երկարաձգման հնարավորության ստեղծումը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության գործակալությունը շարունակել և ավելի ամրապնդել է համագործակցությունը ՄՍՀԿ, ԵԱԱԳ միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների հետ: Համագործակցության հիմնական կարևոր ուղղությունը 2018 թվականին Գործակալության մասնագետների մասնակցությունն էր տարբեր միջոցառումներին՝ համաժողովներին, սեմինարներին, կլոր սեղաններին, գործնական հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվել են մտավոր սեփականության բնագավառի զարգացման ուղիները:

ՄՍՀԿ աջակցությամբ Գործակալության պատվիրակությունը 2018 թվականի հունիսին այցելեց Կորեայի մտավոր սեփականության գրասենյակ (KIPO)՝ մտավոր սեփականության բնագավառում նրանց կողմից մշակված ուսումնական ծրագրերին ծանոթանալու և այդ փորձը Հայաստանի Հանրապետությունում ներդնելու նպատակով: Պատվիրակության ներկայացուցիչները ծանոթացան մտավոր սեփականության բնագավառում մշակված ուսումնական ծրագրերին, ինչպես նաև ներկա գտնվեցին դպրոցներում մտավոր սեփականության վերաբերյալ դասընթացներին, այցելեցին էլեկտրոնային խաղերի արտադրության ստուդիաները: Հանդիպման ընթացքում քննարկվեց փոխադարձ հուշագրի ստորագրումը, որը հիմք կհանդիսանա ոլորտում հետագա համագործակցության համար: 2019 թվականի աշնանը Գործակալությունը կհյուրընկալի KIPO-ի պատվիրակությանը:

Մտավոր սեփականության գործակալության ներկայացուցիչը մասնակցել է Պեկին քաղաքում տեղի ունեցող Գոտու և Ճանապարհի երկայնքով տեղակայված երկրների համար կազմակերպված մտավոր սեփականության վերաբերյալ բարձր մակարդակի կոնֆերանսին, որի ընթացքում մտավոր սեփականության գերատեսչությունների ղեկավարները քննարկել են մտավոր

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

սեփականության դերն ու կարևորությունը երկրների տնտեսությունների զարգացումը խթանելու գործում:

Ղրղզստանի մտավոր սեփականության գերատեսչության ղեկավարի հրավերով գերատեսչության 25 ամյակին նվիրված միջոցառմանը, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 2-3-ը Իսիկ-Կուլ քաղաքում, մասնակցել է Գործակալության պետի տեղակալը: Միջոցառման ընթացքում քննարկվել են նաև ավանդական գիտելիքի իրավական պահպանության հարցերը:

2018 թվականի ապրիլի 16-17-ին գործակալության ներկայացուցիչը մասնակցել է Մոսկվայում կայացած «Թվային տրանսֆորմացիա. Մտավոր սեփականությունն ու բլոկչեյն տեխնոլոգիաները» խորագրով կոնֆերանսին:

2018 թվականի ապրիլի 17-25-ը, գործակալության արտոնագրային փորձագետները Չժենչո քաղաքում մասնակցել են Չինաստանի Մտավոր սեփականության ազգային գրասենյակի (CNIPA) կողմից Մետաքսի ճանապարհի երկայնքով գտնվող երկրների համար կազմակերպված «Արտոնագրային փորձաքննություն» թեմայով ուսումնական դասընթացին: Ուսումնական դասընթացը նպատակ ուներ մասնակիցներին ծանոթացնել Չինաստանի արտոնագրային համակարգին, փորձաքննության անցկացման մանրամասներին:

Եվրասիական արտոնագրային գերատեսչության կողմից ազգային գերատեսչությունների մասնագետների համար կազմակերպված վերապատրաստման որակավորման բարձրացման դասընթացներին (քիմիայի, բժշկության և կենսատեխնոլոգիայի, մեխանիկայի ու ֆիզիկայի բնագավառների հայտերի փորձաքննության առանձնահատկությունները)» մասնակցել են գործակալության Գյուտերի և օգտակար մոդելների բաժնի փորձագետները:

2018 թվականի հունիսի 5-8-ը Քիշնև քաղաքում՝ ԵՄ տեխնիկական աջակցություն ծրագրի շրջանակներում կազմակերպված «Մտավոր սեփականության իրավունքի կիրառումը» խորագրով տարածաշրջանային սեմինարին մասնակցել է նաև գործակալության աշխատակիցը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիայի Սեռ քաղաքում Ֆրանսիական պետական կառույց հանդիսացող Գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնի կողմից կազմակերպվել է աշխարհագրական նշումներին ուղղված միջազգային 10-օրյա վերապատրաստման դասընթաց, որին մասնակցում էր գործակալության ապրանքային նշանների ու արդյունաբերական նմուշների բաժնի փորձագետը:

Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի հիման վրա Արդյունաբերական նմուշների իրավական պահպանության եվրասիական համակարգ ստեղծելու նպատակով ԵԱԱԳ անդամ երկրների գերատեսչությունների աշխատակիցներից ստեղծված աշխատանքային խումբը, որում ընդգրկված էր նաև Գործակալության ներկայացուցիչը, 2018 թվականին կայացած մի քանի հանդիպումների արդյունքում պատրաստել է Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արդյունաբերական նմուշների պահպանության մասին արձանագրության նախագիծը: